ՀՏԴ 891.981-93 Մկրտումյան
ԳՄԴ 84 Հ-5
Մ 804

Մկրտումյան Նարինե

Մ 804 Հանելուկներ: Նարինե Մկրտումյան,- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2012 թ., 50 էջ:

Գրքում տեղ են գտել հետաքրքրաշարժ հանելուկներ, իսկ վերջում զետեղված են պատասխանները՝ նկարների տեսքով:

ՀՏԴ 891.981-93 Մկրտումյան
ԳՄԴ 84 Հ-5

ISBN 978-9939-53-574-6

© Ն. Մկրտումյան, 2012 թ.

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

# ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ



ԵՐԵՎԱՆ-2012

Նա մի փոքրիկ կաթնասուն է,
Ո՛չ մկնիկ է, ո՛չ թռչուն է,
Պոչիկ ունի, հովհար-թևեր,
Մազոտ մարմին, մանրիկ աչքեր։





Ձեռագործի հմուտ վարպետ,

Բայց չի հյուսում գորգ ու կարպետ,

Առանց շյուղի ցանց է գործում,

Որ զոհերին այդպես որսում:





Աղջիկ է, բայց պոչիկ ունի,

Հարսիկ է, բայց շորիկ չունի,

Դիցուհի է անզուգական,

Հեքիաթային, անիրական։



Ամառ-ձմեռ թասակով է,

Թզուկ է, կարճ հասակով է,

Մե՛կ համեղ է, ախորժաբեր,

Մե՛կ էլ՝ թունոտ ու մահաբեր։



Փոքրիկ գունդ է՝ պատկերազարդ,
Խայտաբղետ և գունազարդ,
Աջ ու ահյակ պտտելիս
Աշխարհով մեկ ման ես գալիս:





Գետնատարած գնդլիկը՝
Հաստագլուխ ցմփորիկը,
Մե՛րթ Մոխրոտի կառճն է դառնում,
Մե՛րթ՝ մարդկային կերպար առնում:





Գլանաձև, վրան կաշի,
Առանց նրա էլ ի՞նչ տաշի...
Երբ ծեծում են, նա չի լացում,
Այլ բոլորին պար է ածում:



Կենդանի է նա ընտանի,

Ե՛վ կաթնատու, և՛ պիտանի,

Դեռ շատ վաղուց Հնդկաստանում

Սուրբ էակ է այն համարվում:



Մարմին ունի մետաղից,
Ժանիքները՝ սուր ու ցից,
Առաջ ու ետ գնալիս
Փշուրներ է շաղ տալիս:





Լողացող է, ձկնիկ չէ,
Ջուր ածող է, հավիկ չէ,
Հենց որ գարուն է գալիս,
Ուրախ համերգ է տալիս:





Թերթեր ունի, վարդ չէ,
Ծապիկ ունի, մարդ չէ,
Ընկերացի՛ր նրա հետ,
Որ չմնաս դու տգետ։



Ջրի միջին լողում է,
Գետնի վրա սողում է,
Քաղցի հանդեպ՝ դիմացկուն,
Խորագետ է, իմաստուն:



Երկկենցաղ է,

Գորտի նման,

Հետն էլ անպոչ,

Մեծաբերան:





Այն ն՛ բույս է,
Ն՛վ մարմնի մաս,
Դե՛ գուշակիր,
Թե կարենաս:





*Նախշազարդ է, տարբեր ձևի,*

*Խավավոր է, առանց թևի,*

*Այնուհանդերձ հեքիաթներում*

*Սավառնում է բարձունքներում:*



Հաղթանդամ է, բոյ-բուսաթով,
Անց է կենում անապատով,
Տեղափոխում ծանր բեռներ,
Մեջքին ունի լեռ կամ լեռներ:



Երբ մութ գիշերն է գալիս,
Վերից աչքով են տալիս
Կանթեղները լուսավոր,
Սրածայր ու թևավոր:





Արշալույսին ոսկե կառքով
Երկինք ելնում, պտտվում,
Իրիկունը տուն է դառնում,
Իր մոր գրկում քուն մտնում:





Ասեղ ունեմ,

Բայց ծակ չունի,

Փոխարենը

Գլխարկ ունի:



Գետաբնակ

Մեծ կաթնասուն,

Գիտե՞ս՝ նրան

Ինչ են ասում:



Թռչնակ չէ, բայց թևավոր է,

Գեղեցկադեմ, լուսավոր է,

Արարած է եթերային,

Պատգամաբեր աստվածային:





Ուղղանկյուն է, բացիկ չէ,
Մուտավոր է, զատիկ չէ,
Քարեր ունի, որոնցով
Խաղ ենք անում մերոնցով:





*Օրոր-շորոր ման է գալիս,*
*Ջրի միջին լող է տալիս,*
*Լայնակտուց ու կարճատոտ,*
*Կարճլիկ վզով, սաստիկ վախկոտ։*



Սողունն է շատ վտանգավոր,
Ջրաբնակ ու կեղծավոր,
Որսից առաջ սուգ է կապում,
Կեղծ արցունք է աչքից թափում:



Ճյուղեր ունի
Վարսի պես,
Լաց է լինում
Հարսի պես:





Մարմին է, բայց
Գլուխ չունի,
Թևեր ունի,
Ոտքեր չունի:





Գոտի է լայն, աղեղնավոր,

Եթերային ու գունավոր,

Ծնվում է նա լուրթ երկնքում,

Մահկանացուն շուտով կնքում:



Լակ է չար, մտացածին,

Մութ աշխարհից, խավարածին,

Մեծ երախից հուր է թափում,

Ջրի ճամփան՝ ակը փակում։





Երեք խոշոր
Աչք ունի,
Ամեն մեկը
Մի գույնի:





Մոլորակ է այն
Եվ քիմիական տարր,
Դե ասա՝ ինչն է,
Թե գլխի ընկար:





Կլորիկ է գնդի պես,

Զոլավոր է զեբրի պես,

Երբ լավ հասած է լինում,

Անուշ համ է ունենում:



Արմատ ունի, ծառ չէ,
Պսակ ունի, հարս չէ,
Աքցանի պես բռնում է,
Աղացի պես մանրում է:



Զարթուցիչ է, բայց շնչավոր,

Ալ մորուքով, կտուցավոր,

Այգաբացին հենց արթնանում,

Զիլ կանչում է, քնից հանում:





*Պոչիկ ունի ու չորս թաթիկ,*
*Սողում է նա՝ աշխույժ, ճարպիկ,*
*Բռնվելիս պոչը պոկում,*
*Ճողոպրում է, կյանքը փրկում:*





Յոթ քույրեր են երգեցիկ,
Մեղեդային, գեղեցիկ,
Մեկը մեկից տարբերվող,
Ախորժաձայն ու գերող:



Բերան չունի, սուլում է,
Ոտքեր չունի, սուրում է,
Քաշքշում է, պար գալիս,
Աղբ ու փոշի շաղ տալիս:



Մարդու նման ման է գալիս,

Ձկնիկի պես լող է տալիս,

Թռչուն է այն սև ու ճերմակ,

Թևիկները՝ փոքրիկ լողակ:





*Ծնազգի է, խորամանկ,*

*Սուր դնչիկով, մորթին՝ թանկ,*

*Գիշատիչ է, կարճատոտ,*

*Կախշուն պոչով՝ թավ, բրդոտ։*





Ջրային բույս՝ ծաղիկներով
Եվ ուտելի պտուղներով,
Աստվածային, գեղեցկաթույր,
Սրբազան և անուշաբույր:



Ո՛չ վագր է, ո՛չ էլ՝ ձի,
Բայց ասում են վագրաձի,
Էն որ մի քիչ մտածես,
Հանելուկը կլուծես:



Արեգի պես կլոր է,

Մանգաղի պես կեռ-կոր է,

Երբ որ գիշերն է ընկնում,

Վառում է մութ երկնքում:





Խոշորակն, կեռաքիթ,

Հայացք ունի անքթիթ,

Գիշերները կոնչում,

Սարսափ է մեզ ներշնչում:



# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

3



4



5



6



7



8



9



10



11



12



13



14



15



16



17



18



19



20



21



22



23



24



25



26



27



28



29



30



31



32




33



34



35



36



37



38



39



40



41



42



43



44



ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

# ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ




ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ԽՄԲԱԳԻՐ ԵՎ ՍՐԲԱԳՐԻՉ՝

ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՄՈՒՏՔԱԳՐՈՂ ԵՎ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ՝

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ